ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Էջմիածնի 1915 թ. գաղթականական համագումարից հետո Պետրոգրադի և Մոսկվայի հայկական կոմիտեները 1915 թ. աշնանը Պետրոգրադում կայացած իրենց միացյալ նիստում որոշեցին հրավիրել հայ փախստականներին նպաստող կազմակերպությունների ներկայացուցիչների նոր համագումար[1]:

Պետրոգրադում համագումար հրավիրելու միտքը հղացվել էր Մոսկվայի հայ գործիչների կողմից և ապա հավանության արժանացել նախ՝ Մոսկվայի և ապա՝ Պետրոգրադի հայկական գաղութներում:

Ներքին գործերի նախարարությունն արգելել էր համագումարի հրավիրումը Թիֆլիսում կամ Էջմիածնում, որպեսզի այն սահմանափակվեր միայն գաղթականության խնդիրների քննարկմամբ: Համագումարը պետք է անցկացվեր «ժողովների ժամանակավոր կանոնների» մասին հրահանգի պահպանմամբ, այսինքն ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ և համագումարի ծրագրի ու զեկուցումների նախնական ներկայացմամբ[2]:

Պետրոգրադում կայանալիք համագումարի կապակցությամբ կովկասահայերի մոտ հենց սկզբից ևեթ ի հայտ եկան տարբեր կարծիքներ: Ոմանք համաձայն էին Մոսկվայի և Պետրոգրադի հայերի մտադրությանը, իսկ ոմանք էլ համակիր լինելով համագումարի գաղափարին՝ հասկանալի պատճառով դեմ էին Պետրոգրադում համագումար հրավիրելուն և պնդում էին, որ, այնուամենայնիվ, նպատակահարմար է համագումարը հրավիրել Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Կոթողիկոսի բարձր հովանավորության ներքո և նրա նախագահությամբ[3]:

Թիֆլիսում կայացած ժողովների տպավորությունն այն էր, որ համագումարը “de facto” չէր կարող տեղի ունենալ և որ առնվազն այն չէր կարող իր նպատակին ծառայել: Առաջ քաշելով այսպիսի պատճառաբանություն՝ այն կարծիքն էր արտահայտվում, որ Պետրոգրադի համագումարն այսպիսի պարագաներում կդադարեր համագումար լինելուց, որ այն կդառնար մի տեսակ նախապատրաստական ժողով, մի մասնավոր խորհրդակցություն կամ խորհրդաժողով, որն ապագայում կայանալիք իսկական համագումարի խորհրդածության համար նյութ կմշակեր[4]:

Մոսկվայի և Պետրոգրադի հայ գործիչներն ավելորդ համարեցին համագումարի

---

[1] ՀԱԱ, ֆ.55, ց.1, գ.134, թ. 294:

[2] ГАРФ, ф. ДП.00, 1916 г., д. 14, л. 62, նաև ՀԱԱ (ՆՊԱ), ֆ. 1120, ց.1, գ. 86, թ. 25:

[3] «Համբավաբեր», 1916 թ. մայիսի 15, թիվ 20, նաև «Աշխատանք», 1916 թ. հոկտեմբերի 8, թիվ 46:

[4] «Գաղափար», 1916 թ. մայիսի 15, թիվ 37:

հրավիրման տեղի հարցը սկզբունքի և նպատակահարմարության տեսակետից լուրջ քննության ենթարկելը, չհարցրեցին կովկասահայերի կարծիքը և սկսեցին նախապատրաստվել համագումարի աշխատանքներին: Փաստորեն Կովկասի հայությունը մնաց անտեղյակ Պետրոգրադում կատարվող նախապատրաստական իրադարձություններին: Այդ անկազմակերպ վիճակը շարունակվեց մինչև այն ժամանակ, երբ կազմակերպիչ կոմիտեն կովկասահայ հաստատություններին հայտնեց համագումարի հրավիրման ժամանակի մասին: Այն նշանակվեց 1916 թ. մայիսի 10-12-ը[5]:

Սակայն նախքան համագումարի հրավիրումը անհրաժեշտ էր միավորել այդ հարցով զբաղվող բոլոր ուժերի գործունեությունը: Այդ նպատակով 1916 թ. մարտի 20-ին Վեհափառ Հայրապետի և Պողոս Նուբար փաշայի անմիջական նախաձեռնությամբ տեղի ունեցավ ընդդիմադիր խմբերի և Դաշնակցություն կուսակցության համատեղ խորհրդակցությունը՝ ուժերի միավորման և համատեղ գործունեության հարցը վերջնականապես լուծելու համար:

Դաշնակցականները չընդունեցին ընդդիմադիր ուժերի առաջարկները և առաջ քաշեցին իրենց պահանջները, այն է Ազգային բյուրոյի անդամները պետք է ամբողջությամբ ներկայացվեին համագումարում այն դեպքում, երբ հնչակյանները, ռամկավարները և վերակազմյալ հնչակյանները պետք է առաջադրեին ընդամենը երկուական, իսկ «Մշակ»-ի, «Հորիզոն»-ի, «Վան-Տոսպ»-ի և «Գաղափար»-ի խմբագրությունները՝ մեկական ներկայացուցիչներ:

Սակայն որոշակի համաձայնություն չկայացավ, որից հետո դաշնակցականները հույսեր փայփայեցին իրենց պայմաններն անցկացնել հայ հասարակական կազմակերպությունների՝ Պետրոգրադում հրավիրվելիք համագումարի ժամանակ, որտեղ պետք է քննարկվեին գաղթականական խնդիրները[6]:

Պետական դումայի անդամ Մ. Պապաջանյանի կողմից Ներքին գործերի նախարարի և Կովկասի փոխարքայի համաձայնությունը ստանալուց հետո ընտրվեց համագումարի Կազմակերպիչ մի կոմիտե, որը դիմելով փախստականներին նպաստող ազգային հաստատություններին՝ առաջարկեց իրենց ներկայացուցիչներին ուղարկել Պետրոգրադ[7]:

Սակայն հայ բարեգործական և հասարակական շատ հաստատություններ հրաժարվեցին մասնակցել Պետրոգրադի համագումարի աշխատանքներին, քանի որ Կազմակերպիչ կոմիտեն, ինքնին, իր կարգադրություններով հանդերձ, զրկում էր նրանց մասնակցելու հնարավորությունից: Այդ է պատճառը, որ սկզբում համագումարին մասնակցելուց հրաժարվեցին Էջմիածնի Եղբայրական օգնության կոմիտեն, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Կենտրոնական կոմիտեն, Նպաստամատույց և Հայոց գյուղատնտեսական ընկերությունները, Միացյալ Գյուղատնտե-

---

[5] ՀԱԱ, ֆ. 50, ց.1, գ. 140, թ. 45, նաև ՀԱԱ (ՀՔԿՓՊԿԱ), ֆ. 1022, ց.4, գ. 29, թ. 4, նաև «Համբավաբեր», 1916 թ. մայիսի 15, թիվ 20:

[6] ГАРФ, ф. ДП.00, 1916 г., д. 14, л. 52, նաև ՀԱԱ (ՆՊԱ), ֆ. 1120, ց.1, գ. 86, թ. 24:

[7] ՀԱԱ (ՆՊԱ), ֆ. 55, ց.1, գ. 134, թ. 294:

սական կոմիտեն, Ներսիսյան դպրոցը և Ազգային բյուրոն [8]:

Թե որքան անփույթ ձևով էր կազմված կազմակերպիչ կոմիտեի կողմից հրավիրվածների ցուցակը, բավական է նկատել, որ հրավիրվել էին մեծ թվով ընկերություններ, որոնք ոչ մի կապ և առնչություն չունեին գաղթականական գործերի հետ: Հրավիրվել էին նաև ներկայացուցիչներ հասարակական փոքր և անհայտ խմբերից:

1916 թ. մայիսի 10-ին Պետրոգրադի ճանապարհների հաղորդակցության նախարարության շենքի դահլիճում (Բորոդինսկայա թիվ 6 շենքում) մեծ հանդիսությամբ բացվեց հայ գաղթականության 1-ին համառուսական համագումարը[9]: Նախատեսվում էր, որ համագումարի աշխատանքներին ընդհանուր առմամբ մասնակցելու էին 300 պատգամավորներ, սակայն համագումարի աշխատանքներին ներկա էին ընդամենը 142 պատգամավորներ, որոնց թիվը հետագայում հասավ 175[10]: Պատգամավորների մեծամասնությունը կազմում էին Պետրոգրադի (33 հոգի), Մոսկվայի (17 հոգի) և Ռուսաստանի հայկական այլ շրջանների՝ Ռոստովի (13 հոգի), Աստրախանի (5 հոգի), Օդեսայի (3 հոգի), Եկատերինոդարի (2 հոգի) ներկայացուցիչները: Մնացած տեղերից մասնակցում էին մեկական ներկայացուցիչներ: Անդրկովկասից ժամանել էին ներկայացուցիչներ գրեթե միայն գավառներից, այն է՝ Բաքվի (11 հոգի), Երևանի (7 հոգի), Թիֆլիսի նահանգներից (4 հոգի) և Շուշիից (4 հոգի)[11]: Համագումարի ներկաների մեծամասնությունը դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչներն էին: Նրանք ներկայացնում էին 16 պատգամավոր: Դա պայմանավորված էր նրանով, որ դաշնակցականները հասցրել էին նախապես տեղեր գրավել բարեգործական հաստատություններում՝ օգտագործելով դրանք իրենց կուսակցական նպատակների համար: Համագումարում նրանք ներկայացնում էին ԿՀԲԸ, Կովկասի հայոց գյուղատնտեսական ընկերությունը, Կենտրոնական կոմիտեն, Բաքվի Հայկական մարդասիրական ընկերությունը, Շուշիի Եղբայրական կոմիտեն, Մոսկվայի Հայկական և Պետրոգրադի կոմիտեները: Մյուս կուսակցությունները ներկայացնում էին Նպաստամատույց ընկերությունը, Հայաստանի տնտեսության վերականգնման կոմիտեն և Էջմիածնի Եղբայրական օգնության կոմիտեն[12]:

Համագումարի նիստերին ներկա էին նաև սենատորներ Իվանովը, Տատյանյան կոմիտեի նախագահ՝ սենատոր Նեյդգարտը, սենատոր Նիկիտինը[13], ակադեմիկոս Ն. Մառը, Պետական Դումայի անդամներ Մ. Պապաջանյանը և Մ. Աճեմյանը, Պետական Խորհրդի նախկին անդամ Պավել Ղուկասովը, գեներալ Բաղրամյանը և Սալթան Շահը, Էլիկում Իվ. Բաբայանը, Աբամելիք Լազարևը, գրաֆ Տոլստոյը, գեներալ Թամամշյանը, Լևոն Մանթաշյանը և ուրիշներ[14]:

---

[8] «Համբավաբեր», 1916 թ. մայիսի 15, թիվ 20:

[9] ՀԱԱ (ՆՊԱ), ֆ. 810, ց. 1, գ. 46, թ. 1:

[10] ГАРФ, ф. ДП.00, 1916 г., д. 14, л. 66-72.

[11] «Գաղափար», 1916 թ. հունիսի 8, թիվ 46:

[12] ГАРФ, ф. ДП.00, 1916 г., д. 14, л. 119-125.

[13] АВПРИ, ф. 151, Политархив, 1916 г., оп. 482, д. 3482, л. 4.

[14] ՀԱԱ (ՆՊԱ), ֆ. 810, ց. 1, գ. 46, թ. 1, նաև «Հորիզոն», 1916 թ. մայիսի 17, թիվ 108:

Համագումարը ողջույնի հեռագիր ուղարկեց Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովին և պաշտոնատար այլ անձանց[15]:

Պետրոգրադի համագումարի կոչում նշվում էր, որ «համագումարի նպատակն է նման միօրինակություն ու համաչափություն մտցնել, օգնության բոլոր տեսակներն ու ձևերը կազմակերպելու հարցերը քննել և թեթևացնել թշվառության մատնված եղբայրակիցների դառը վիճակը, բավարարել նրանց աղաղակող կարիքները»[16]:

Համագումարի աշխատանքները շարունակվեցին 5 հանձնախմբերում՝ կազմակերպչական, դպրոցական-կրթական և որբանոցների, գյուղատնտեսական, բժշկա-առողջապահական, ֆինանսա-տնտեսական և իրավագիտական: Բոլոր հանձնախմբերում քննարկումները կատարվում էին հայոց լեզվով[17]:

Գյուղատնտեսական հանձնախումբը, հիմնվելով Մ. Սողոմոնյանցի և Ա. Թերզիբաշյանի զեկուցումների տվյալների վրա և հաշվի առնելով Հայաստանի բնական պայմանները, որոշեց վերադարձող փախստականների գյուղատնտեսության վերականգնման համար իբրև նվազագույն չափ ընդունել յուրաքանչյուրին 175 ռ. օգնություն: Փախստականների թիվը հաշվելով 200.000 հոգի՝ ընդհանուր գումարը ստացվում էր 27 մլն. ռ.[18]: Միաժամանակ նշվում էր, որ Հայաստանի վերաշինության գործը ղեկավարող կենտրոնական մարմինը ունենալու էր հատուկ գյուղատնտեսական մասնաճյուղ: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում ժողովրդի մեջ գյուղատնտեսական գիտելիքներ տարածելուն: Այդ առումով անհրաժեշտ էր համարվում ժամանակավոր և տևական դասընթացներ կազմակերպել գյուղատնտեսության զանազան ճյուղերի և արհեստների վերաբերյալ, անհապաղ միջոցներ ձեռք առնել գյուղատնտեսական հրահանգիչներ պատրաստելու ուղղությամբ, երեխաների համար հիմնել գյուղատնտեսական ապաստարաններ: Հայրենիք վերադարձող ազգաբնակչությանը օգնություն հասցնելու համար նպատակահարմար էր համարվում հիմնել գյուղատնտեսական գործիքների և նյութեղենի պահեստներ և հացի հասարակական շտեմարաններ: Բացի դրամական օգնությունից, ցանկալի էր համարվում կազմակերպել նաև փոխառություն՝ ավելի ունևոր հողատերերի և առևտրականների համար, ինչպես նաև հիմնել կոոպերատիվներ և մթերանոցներ՝ բնակչությանը սերմացու, գործիքներ և լծկան անասուններ մատակարարելու նպատակով[19]:

Ֆինանսական մասնաճյուղը գտնում էր, որ հարկավոր էր հիմնել աշխատանքի բյուրոներ՝ այն պայմանով, որ աշխատանք հայթայթելով արգելք չհարուցվեր փախս-

---

[15] АВПРИ, ф. 151, Политархив, 1916 г., оп. 482, д. 3482, л. 2, 3, 4, Э³¨ “Биржевые Ведомости” 1916 г. 15 мая, N 15559, Э³¨ “Современное Слово”, 1916г. 15 мая, N 2993, նա– “Петроградскив Ведомости” 1916 г. 12 мая, N 103.

[16] ՀԱԱ (ՀՔԿՓՊԿԱ), ֆ. 1022, ց. 4, գ. 30, թ. 1:

[17] АВПРИ, ф. 151, Политархив, 1916 г., оп. 482, д. 3482, л. 5, 6, 7, Էաև “Речь” 12 мая, N 129, նաև “Современное Слово”, 1916г. 15 мая, N 2993, Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թ. 238, գ. 270, թ. 1-4, նաև «Գաղափար», 1916 թ. մայիսի 15, թիվ 37:

[18] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թ. 238, գ. 270, թ. 1, նաև ГАРФ, ф. ДП.00, 1916 г., д. 14, л. 123, նաև «Հորիզոն», 1916 թ. մայիսի 17, թիվ 108:

[19] «Հորիզոն», 1916 թ. մայիսի 14, թիվ 106:

տականներին հայրենիք վերադառնալու ժամանակ: Այս նկատառումով նախատեսվում էր աշխատանք տալ միայն այն փախստականներին, որոնք զուրկ էին հայրենիք վերադառնալու հնարավորություններից: Կենտրոնական մարմինն իր գյուղատնտեսական մասնաճյուղի միջոցով կազմակերպում էր ամեն տեսակ կոոպերատիվ հաստատություններ: Անհրաժեշտ էր համարվում նախ սկսել գաղթականների տների վերաշինությունը, որի համար որոշվեց գյուղական յուրաքանչյուր բնակչի՝ 50-ական ռ. ծախս, որով 170.000 հոգու համար կպահանջվեր՝ 8.500.000 ռ., իսկ քաղաքների տների կարգի բերման համար՝ 3.000.000 ռ. գումար, ընդամենը՝ 11.500.000 ռ.: Գյուղատնտեսության վերաշինության համար հատկացնելով ևս 27.000.000 ռ., ընդհանուր գումարը տների վերաշինության հետ միասին կազմելու էր՝ 38.500.000 ռ.:[20] Յուրաքանչյուր հայի բարոյական պարտականությունն էր նյութական մասնակցություն ցուցաբերել Հայաստանի վերաշինության գործին: Ֆինանսական մասնաճյուղը հայ և օտար հաստատությունների վստահությունը ամրապնդելու և գործը հաստատուն հիմքերի վրա դնելու նպատակով նախատեսում էր բոլոր գործող մարմինների մեջ մտցնել միատեսակ և կանոնավոր հաշվապահություն և պարբերական հաշվետվություն:

Բժշկա-առողջապահական հանձնախումբը, լսելով Քաղաքների միության Թիֆլիսի ներկայացուցչի զեկուցումը, որոշեց առաջարկել հայկական կազմակերպություններին համաձայնեցնելու համար իրենց գործունեությունը Քաղաքների միության գործունեության հետ և ընտրել բժշկական հանձնաժողով՝ բժշկա-առողջապահական բոլոր կարգի աշխատանքները վարելու համար: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում որբանոցների բժշկական հսկողության վրա: Հարյուրից ավելի երեխաներ ունեցող որբանոցների համար նախատեսվում էին հիվանդանոցներ: Բժշկական մասնաճյուղը մեծ անհրաժեշտություն էր համարում պայքարելու մաշկային, վենեբական և աչքի հիվանդությունների դեմ, որոնց իսպառ վերացման համար կարևորվում էր գոյություն ունեցող հիվանդանոցներին կից հատուկ բաժանմունքների հիմնումը[21]:

Դպրոցական-կրթական և որբանոցների հանձնաժողովը՝ Թիֆլիսի ազգագրական ընկերության նախագահ Ե. Լալայանի նախագահությամբ որբերի խնամքի և դաստիարակության գործը կանոնավոր կերպով վարելու համար անհրաժեշտ էր համարում կենտրոնական որբախնամ մարմնի կազմակերպումը: Հանձնաժողովը տարբեր միջոցառումներ էր նախատեսում որբերի պահպանության և դաստիարակության ուղղությամբ: Նախ, որբեր և անխնամ երեխաներ հավաքելու և որբանոցներում տեղավորելու համար անհրաժեշտ էր կազմակերպել թռուցիկ խմբեր: Որբերը ժամանակավորապես պետք է պահվեին Անդրկովկասի հայկական գյուղական միջավայրում: Որբերի խնամատարությանը զուտ ընտանեկան բնույթ հաղորդելու նպատակով, որբանոցների հանրակացարանային տեսակը նախատեսվում էր փոխարինել ընտանե-

[20] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թ. 238, գ. 270, թ. 1-2, նաև «Գաղափար», 1916 թ. հունիսի 10, թիվ 47:

[21] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թ. 238, գ. 270, թ. 2-3, նաև ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 286, թ. 3:

կան «օջախների»: Մեծ ուշադրություն էր դարձվում որբերի աշխատանքային դաստիարակության և ազգային նկարագրի պահպանությանը, որի համար հանձնաժողովը ցանկանում էր նրանց հավաքել հայ և օտար անհատներից և հաստատություններից և պահպանել ու դաստիարակել հայկական որբանոցներում: Ցանկալի համարելով փախստական երեխաների համար մանկապարտեզների և դպրոցի հիմնումը, միաժամանակ առավելություն էր տրվում արևմտահայ ուսուցիչներին, արևմտահայ բարբառով կազմված դասագրքերին և ծխական դպրոցների ծրագրերին[22]:

Իրավաբանական հանձնաժողովը, համաձայն դաշնակից պետությունների 1915 թ. հայտարարագրի, անմիջապես միջոցներ ձեռք առավ՝ ամփոփելու ոճրագործություններին վերաբերող նյութերը՝ պատասխանատվության ենթարկելու համար օսմանյան բոլոր քրեական հանցավորներին և պաշտոնյաներին: Դրանք պետք է ներկայացվեին քննիչ հանձնաժողովի նախագահ սենատոր Կրիկցովին:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում այն հանգամանքին, որ կառավարությանը հասցեագրված դիմումների միջոցով տեղացի ծանոթ հայերի օգնությամբ կազմակերպվեր մահմեդականների մոտ գերության մեջ գտնվող բազմաթիվ հայերի վերադարձը: Իրավաբանական հանձնաժողովը մեծ ուշադրություն էր դարձնում շարժական և անշարժ անպաշտպան մնացած գույքերը ստուգելու և իրենց հայ տերերին հանձնելու ուղղությամբ: Թշնամի պետությունների հպատակներին վերաբերող այն օրենքները, որոնք դյուրություն էին տալիս օտարահպատակ սլավոն ժողովուրդներին Ռուսաստանում ապրելու դեպքում, իրավաբանական հանձնաժողովը ձգտում էր դրանք իրագործել նաև հայ գաղթականների նկատմամբ: Աչքի առաջ ունենալով այն, որ Ռուսաստանում և Սիբիրում գտնվում էին թուրքական բանակի մեծ թվով հայ գերիներ, որոնք միանգամայն զուրկ էին հոգատարությունից, կենտրոնական մարմինը մի շարք միջոցներ ձեռք առավ նրանց գերությունից ազատելու նպատակով[23]:

Կազմակերպական հանձնախումբը հարց բարձրացրեց՝ հիմնելու 9 հոգուց բաղկացած հանձնաժողով, որը շուտափույթ կհրավիրեր հայկական համագումարների կենտրոնական կոմիտե: Դրա կազմի մեջ մտան բոլոր օրինականացած ընկերությունների և կոմիտեների ներկայացուցիչները[24]:

Պատերազմից տուժածներին օգնող Պետրոգրադի հայկական ընկերությունը լիազորվում էր շարունակել հայ փախստականներին տրվող կառավարական նպաստների բաժանումը, որոնց բաշխումը նախատեսվում էր կատարել համագումարի կողմից ընտրված 9 հոգուց բաղկացած հանձնաժողովի մասնակցությամբ: Հայկական Կենտրոնական կոմիտեին ինքնալրման (կոոպտացիայի) կարգով իրավունք էր վերապահվում հրավիրել արտասահմանյան ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ առանց որոնց այդ կազմակերպության ոչ մի նպատակ չէր կարող իրականանալ[25]:

---

[22] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թ. 238, գ. 270, թ. 3, նաև ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 286, թ. 2, նաև «Գաղափար», 1916 թ. հունիսի 10, թիվ 47, նաև «Հորիզոն», 1916 թ. մայիսի 14, թիվ 106:

[23] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 286, թ. 3, նաև «Հորիզոն», 1916 թ. մայիսի 15, թիվ 107:

[24] «Հորիզոն», 1916 թ. մայիսի 14, թիվ 106:

[25] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 2, թ. 238, գ. 270, թ. 4:

Պետրոգրադի գաղթականական համագումարը զբաղվեց միմիայն փախստականներին օգնելու խնդիրներով և ընդունեց հետևյալ որոշումները.

1. միջնորդել, որ պատերազմական գործողություններից առաջացած վնասների հատուցման օրենքը տարածվի նաև հայ փախստականների վրա,
2. տեղեկություններ հավաքել հայերի վրա գործադրված թուրքական գազանությունների մասին և համաձայն դաշնակից պետությունների 1915 թ. հայտարարագրի՝ պատասխանատվության ենթարկել հանցավորներին,
3. կազմակերպել տեղական հանձնախմբեր՝ փախստականների գույքը պաշտպանելու համար,
4. միջնորդել, որ օգնություն կազմակերպվի թուրքերից ազատագրված հայկական շրջաններում ծանր պայմանների մեջ գտնվող հայերին[26]:

Ինչպես երևում է, որոշման մեջ ոչ մի խոսք չկար ինքնավարության մասին:

Մի շարք էական հարցեր լուծելուց հետո, որոշվեց կազմել 62 անդամներից բաղկացած կենտրոնական խորհուրդ, որն իր ներկայացուցչությունը պետք է ունենար Կովկասում և Պետրոգրադում: Որոշվեց նաև առաջիկա համագումարը հրավիրել սեպտեմբերին Երևանում կամ Թիֆլիսում[27]:

Պետրոգրադի գաղթականական համագումարը ուներ մի շարք թերություններ.

ա) այն չկարողացավ վերացնել կազմակերպությունների անջատ գոյությունը և նրանց ոչ նպատակամղված գործունեությունը, որը պայմանավորված էր գաղթականական գործի փորձի պակասով:

բ) համագումարը չկարողացավ կազմակերպել Ռուսաստանում ապաստանած հայ մտավորականության ուժերի օգտագործումը:

գ) համագումարը չկարողացավ վերացնել գաղթականության օգնության գործի հաճախակի հապաղումը և այլն[28]:

Ճիշտ է, Պետրոգրադի համագումարում ընկերությունների միություն չստեղծվեց, սակայն գոյություն ունեցող յուրաքանչյուր կազմակերպություն առաջադիմեց նրանով, որ իր գործունեությունը որոշ համակարգի վերածեց: Հիմք տրվեց գաղթականական գործի օրենսդրական և վարչական կազմակերպությանը: Սա էր համագումարի մեծագույն շոշափելի արդյունքը, որով նրա մյուս բոլոր թերությունները ծածկվեցին:

---

[26] «Համբավաբեր», 1916 թ. մայիսի 29, թիվ 22, նաև «Վան-Տոսպ», 1916 թ. մայիսի 22, թիվ 26:

[27] ГАРФ, ф. ДП.00, 1916 г., д. 14, л. 121, նաև «Գաղափար», 1916 թ. մայիսի 27, թիվ 41:

[28] "Армяне и война", Одесса, 1916 г., июль, N 5.